ձախից «սբ Յէկոփ», «սբ Սիմոն»· ներքեւը «սբ Փիլիպոս», «սբ Թումաս»:

Հորիզոնական թեւերից վերեւ եւ ներքեւ չորս անկիւններում մի մի խաչ:

Երկրորդ երեսին՝ Յիսուս նստած է բարձրաթիկունք աթոռի վերայ· «Յս· Քս·» գրուած գլխի կողքերից: Աջով խաչակնքում է, ձախ ծնկանը աւետարան բռնած, Ամենակալի կամ Պանտոկրատորի սովորական ձեւակերպութիւն: Չորս կիսաբոլորակից կազմուած՝ Ամենակալի շրջանակի վերայ գրուած է· «Կոստանդին Կաթող:ի ի յի/շատուկ իւրոյ ի Թուին ՉԳ· կազ/մեցաւ սբ աւետարանս ծ/ախաւք Ստեփանոսի դրան եպիսկ·»

Կազմի անկիւններում աւետարանիչների նշանակները:

Մենք փոքր ինչ աւելի կանգ առանք այս նկարագրութեան վերայ, որովհետեւ քիչ են մեր մանր արուեստի, յատկապէս, ոսկերչական արուեստի մնացորդները, շարունակ կողոպուտի ենթարկուած լինելով:



Պատկ· 11·— Երուս· No. 1956, 171ա·, 1265 Թուի

Հնագոյնները ԺԳ· դարից հին չեն: ԺԳ· եւ ԺԴ· դարից ունինք միայն մասանց երկու պահարաններ եւ աւետարանի երեք կազմեր: Պահարաններից մէկն Կոստանդին Բ·ի Սկեւռայի պահարանն է,* միւսը Պռոշեանների

*Ալիշան· Սիսուան 107: